Իմ դերը՝ որպես Միջազգային Բակալավրիատի ծրագրում ներգրավված երեխայի ծնող

- Որպես Միջազգային բակալավրիատի (ՄԲ) ծրագրում ներգրավված երեխայի ծնող «Օհանյան կրթահամալիրում»՝ դուք՝ ծնողներդ, մեր համայնքի մասն եք կազմում: Ձեր դրական վերաբերմունքը և ուղղորդումը երեխայի ՄԲ ճանապարհորդության անբաժանելի մասն է կազմում:
- Կան նախանշված հստակ տարբերակներ՝ աջակցելու երեխային որպես ծնող: Ներկայացնում ենք երեխային աջակցելու հետևյալ կարևոր և հիմնական հնարավորությունները:



- **Բացահայտե՛ք և վերլուծե՛ք միասին՝ հարցադրումների միջոցով.** ուսուցիչների կողմից կիրառվող առաջնային ռազմավարություններից է հարցադրումների միջոցով գիտելիքի բացահայտումը և հետաքրքրասիրության զարգացումը: Ինչպե՞ս կարող եք դուք կիրառել այս մոտեցումն առավել պարզ տարբերակով.

Primary Years Programme

ՄԲ ծնողները քննարկում են երեխայի հետ տարբեր երևույթներ:

Վերլուծե՛ք տարբեր երևույթներ՝ երկու պարզ, սակայն «կախարդական» հարց ուղղելով երեխային:

1. **Ինչպե՞ս իմացար այդ մասին:**
2. **Ի՞նչու ես էդպես կարծում, փորձի՛ր հիմնավորել:**

- **Խրախուսե՛ք նախաձեռնողականությունը և ազդեցությունը (agency).** ՄԲ-ն սահմանում է ազդեցությունը՝ որպես «իմաստալից նախաձեռնությունների իրականացման հնարավորություն՝ սեփական պատասխանատվության և պարտականությունների գիտակցմամբ, կարծիքի արտահայտման և ընտրության հնարավորությամբ»: Ինչպե՞ս է հնարավոր խրախուսել նախաձեռնողականությունը և ազդեցությունը. ստորև ներկայացնում ենք մի քանի տարբերակներ:

ՄԲ ծնողները խրախուսում են նախաձեռնողականությունը և ազդեցությունը՝ թույլ տալով երեխային.

- ձևավորել ուսումնառության իր անկյունը,
- համատեղ կայացնել տարիքին համապատասխան որոշումներ,
- պլանավորել իր օրը,
- կատարել ընտրություններ (ծնողի դերն է ուղղորդել երեխային՝ ճիշտ ընտրություններ կատարելու հարցում, սակայն ոչ միանձնյա որոշել երեխայի փոխարեն):

- **Ապահովե՛ք հետադարձ կապ (feedback).** Հետադարձ կապի ապահովումն ուսուցիչների կարևոր գործառույթներից է, ինչն իր տրամաբանական շարունակությունը պետք է գտնի տանը: Ինչպե՞ս ⤵

ՄԲ ծնողները հետադարձ կապ են ապահովում հետևյալ կերպ.

- «Ինձ ոչ ձուկ տուր, ոչ էլ ուռկան, այլ ձուկ որսալ սովորեցրու». այս մոտեցմամբ անհրաժեշտ է միասին շտկել սխալները, ոչ թե դրանք բացարձակ կանխել ծնողի կողմից տրված լուծումներով:
- Փորձեք խոսել հետևյալ կերպ. «Հավանեցի՝ ինչպես ես աշխատել .... Հաջորդ անգամ ի՞նչը կփոխեիր»:

- **Բացահայտե՛ք հասկացությունները**. ՄԲ ծրագիրը կառուցված է առանցքային հասկացությունների շուրջ: ՄԲ ծրագիրը կոչվում է **կոնցեպտուալ ուսումնական ծրագիր**, որը հնարավորություն է տալիս աշխարհը բացահայտելու աբստրակտ և առավել լայն հասկացությունների միջոցով՝ կոնկրետ առարկաների սահմաններից դուրս: Ինչպե՞ս կարող եք այս մոտեցումը մասամբ կիրառել տանը. ⤵

Բացահայտե՛ք տարբեր հասկացություններ՝ հետևյալ հարցադրումների միջոցով՝ այս առումով ավելի բովանդակային դարձնելով երեխայի հետ ձեր զրույցները: Այս հարցադրումները նույնպես «կախարդական» են և տարբեր իրավիճակներում կիրառելի:

- **Ձև.** ի՞նչ ձև ունի այն (հետազոտվող իրը, երևույթը,…):
- **Գործառույթ.** ինչպիսի՞ն է, ինչպես է այն կիրառվում:
- **Կապ.** ինչ կապ ունի այլ երևույթների և իրերի հետ:
- **Փոփոխություն.** ինչպե՞ս է փոխվում, ինչ փոփոխություններ կարող է կրել:
- **Պատճառահետևանքային կապ.** ինչու՞ է այդպես:
- **Տեսակետ.** ի՞նչ տարբեր կարծիքներ կան:
- **Պատասխանատվություն.** ո՞րն է մեր պատասխանատվությունը:

- **Երեխայի բնութագիր.** ՄԲ ծրագրում ընդգրկված երեխաներն ունեն 10 ընդհանուր բնութագիր, և այդ բնութագրի զարգացման համար անհրաժեշտ է ծնող-մանկավարժ սերտ համագործակցություն, համանման մոտեցումների ցուցաբերում:
  Նրանք.

1. բաց հայացքների տեր են (open minded),
2. սկզբունքային և կազմակերպված (principled),
3. համարձակ (risk-takers),
4. հաղորդակցվող (communicators),
5. հավասարակշռված (balanced),
6. բանիմաց (knowledgeable),
7. հոգատար և ապրումակցող (caring),
8. հետաքրքրվող (Inquirers),
9. մտածող (մտածող) (thinkers),
10. ինքնավերլուծող (reflective):

Վերոհիշյալ բնութագրերը զարգացնելու համար որպես ծնող խորհուրդ ենք տալիս շարունակաբար բացահայտել և ստեղծել հնարավորություններ՝ զարգացնելու նշյալ հատկությունները: Դիտե՛ք հոլովակը՝ բացահայտելու համար ՄԲ սովորողի բնութագիրը.

https://ibo.org/benefits/learner-profile/